ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ, քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, **Խոսրովադուխտ Գարեգինի Ազատյանի «Պառլամենտարիզմի առանձնահատկություններն ու միտումները փոխակերպվող հասարակություններում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Քաղաքական տեսության մեջ պառլամենտարիզմը փաստացիորեն նույնացվում է ժողովրդավարական արժեքների հետ: Պատմական փորձը ցույց է տալիս, որ այն տարբեր սոցիալական խմբերի շահերը վերհանելու լայն հնարավորություններ է տալիս: Միաժամանակ փոխակերպվող երկրների քաղաքական ինստիտուտների անկայուն բնույթը մի շարք հարցեր է ծնում, մասնավորապես, թե որ պայմանների, ինստիտուտների առկայությունն է համակարգը դարձնում ժողովրդավարական: Ուստի հիմնախնդիրը արդիական է ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան քաղաքագիտական հանրության շրջանակներում:

Ժողովրդավարացման ներկա փուլում խիստ արդիական է ժողովրդավարության զարգացման վրա պառլամենտարիզմի ունեցած նշանակության բացահայտումը, փոխակերպվող հասարակություններում պառլամենտարիզմի ձևավորման ասպեկտների դիտարկումը, կառավարման ձևի՝ որպես ինստիտուցիոնալ հիմնախնդրի ընտրության արժևորումը:

Ատենախոսն իր առջև դրված հիմնախնդրի գիտական մշակման ընթացքում օգտվել և արժևորել է բազում օտարալեզու ուսումնասիրություններ: Պարզվում է, որ հայ իրականության մեջ այս հիմնախնդրին նվիրված ոչ շատ աշխատություններ կան: Թերևս արժևորվում են Ա. Ենգոյանի, Գ. Պետրոսյանի, Հ Մանուչարյանի, Ա. Ալեքսանյանի, Խ. Գալստյանի, Ա. Մարգարովի, Գ. Քեռյանի, Մ. Մարգարյանի, Հ. Հակոբյանի, Հ. Շաքարյանի՝ կարևոր նշանակություն ունեցող գիտական աշխատանքները: Թեմայի ուսումնասիրմամբ մասամբ հարստացվում է առկա բացը:

Պառլամենտարիզմի հիմնախնդրին նվիրված ուսումնասիրությունները մեծ ծավալների են հասնում Արևմուտքում, քանի որ քաղաքական զարգացման միտումները այդ երկրներում թելադրում են մշակել իրենց զարգացման միտումներին համապատասխան հիմնադրույթներ: Բնականաբար, փոքր ու գլոբալ քաղաքականության մշակման թույլ սուբյեկտ հանդիսացող ազգերը նույնպես կարիք ունեն մշակելու իրենց պահանջներին համապատասխան դրույթներ: Հենց այս առումով է նաև կարևորվում քննարկվող ատենախոսությունը:

Դիտարկելով Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային տարբեր երկրներում փոխակերպման գործընթացների բնույթը քաղաքական անցման համատեքստում՝ հեղինակը վերլուծել է տարածաշրջանների երկրներում խորհրդարանական համակարգերի կազմավորման նախադրյալները: Խ. Ազատյանը նպատակադրվել է գնահատել սահմանադրական բարեփոխումների տրամաբանությունը ՀՀ-ում, ցույց տալ դրանց ազդեցությունը պառլամենտարիզմի կայացման վրա, վեր հանել ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող պատճառները և այլն:

Հայտնի է, որ հայ ժողովուրդը գտնվում է բարդ պատմաշրջանում՝ հասարակական-քաղաքական անցումային, հակասական փուլում: Այս բարդ քաղաքական մթնոլորտում առաջնային է դառնում հայոց խորհրդարանի կարևորությունը: Հենց դրանով է նաև կարևորվում ներկա ուսումնասիրությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են դրա հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթն ու կիրառման բնագավառները:

Ատենախոսության առաջին՝ «Պառլամենտարիզմի հետազոտման տեսահայեցակարգային հիմքերը» գլխում քննարկվում են «պառլամենտարիզմ» երևույթի մեկնաբանությունները: Հեղինակը բացահայտել է պառլամենտարիզմի էությունը վերջինիս ինչպես քաղաքական, այնպես էլ իրավական տարբեր խումբ սահմանումների և մեկնաբանությունների ուսումնասիրման միջոցով: Խ. Ազատյանը վեր է հանել պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքերը՝ դրա զարգացման փուլերի

հաջորդականության և պատմական ձևերի ներկայացման համատեքստում: Դիտարկելով ժողովրդավարության զարգացման վրա պառլամենտարիզմի ունեցած նշանակությունը՝ եզրակացրել է, որ իրական ժողովրդավարական սկզբունքների վրա հենված խորհրդարանի ձևավորումն ու գործառնումը բարդ և ժամանակատար գործընթաց է:

Ատենախոսության երկրորդ՝ «Պառլամենտարիզմի կայացման նախադրյալները փոխակերպվող հասարակությունների ժողովրդավարացման համատեքստում» գլխում ներկայացվում են «փոխակերպում» հասկացության վերաբերյալ գիտական տարբեր մոտեցումները, դրան բնորոշ հատկանիշները, դիտարկվում է տարբեր երկրներում փոխակերպման գործընթացների բնույթը քաղաքական անցման համատեքստում: Մասնավորապես հեղինակը վերլուծել է Արևելյան Եվրոպայի երկրներում խորհրդարանական համակարգերի կազմավորման նախադրյալները:

Ատենախոսության երրորդ՝ «Պառլամենտարիզմի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Երրորդ Հանրապետությունում» գլխում դիտարկվում են պառլամենտարիզմի զարգացման հրամայականները ՀՀ-ում, մասնավորապես հեղինակը գնահատում է սահմանադրական բարեփոխումների տրամաբանությունը, ցույց է տալիս դրանց ազդեցությունը պառլամենտարիզմի կայացման վրա: Ատենախոսության մեջ վեր են հանվում ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող պատճառները, հիմնավորվում են ՀՀ կուսակցական համակարգի արդիականացման հիմնախնդիրները, ներկայացվում է այդ համակարգի զարգացման միտումները ՀՀ-ում խորհրդարանական կառավարման պայմաններում:

- Ատենախոսության մեջ բացահայտվել է պառլամենտարիզմի էությունը վերջինիս ինչպես քաղաքական, այնպես էլ իրավական տարբեր խումբ սահմանումների և մեկնաբանությունների ուսումնասիրման միջոցով: Գնահատելի է, որ հեղինակը ներկայացրել է իր սեփական մեկնաբանությունը՝ շեշտը դնելով պառլամենտարիզմ երևույթի համալիր բնույթի վրա:
- Ներկայացվել է ժողովրդավարության զարգացման վրա պառլամենտարիզմի ունեցած նշանակությունը:
- Դիտարկվել են հետխորհրդային տարածությունում պառլամենտարիզմի ձևավորման ասպեկտները, արժևորվել կառավարման ձևի ընտրությունը որպես ինստիտուցիոնալ հիմնախնդիր:

- ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացումը դիտարկվել է փոխակերպման գործընթացների պրիզմայի ներքո: Հիմնավորվել է, որ հենց փոխակերպման առանձնահատկություններով էլ պայմանավորվել է պառլամենտարիզմի զարգացումը Հայաստանի Երրորդ Հանրապետությունում:
- Առաջարկվել են ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացմանը նպաստող որոշակի մեխանիզմներ:

Ատենախոսության մեջ ձևավորված եզրակացություններում ու ընդհանրացումներում ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները, ամփոփումները: Դրանցից կարևորում ենք հետևյալները.

- Իշխանության ճյուղերի հավասարակշռության պահպանումը պառլամենտարիզմի հիմնական սկզբունքներից է, ինչը ենթադրում է, որ դրանք պետք է գործեն ինքնուրույն և միմյանցից կախված լինեն այնպես, որ ոչ մեկը չգերիշխի մյուսի նկատմամբ: Իշխանության բաշխումը մի քանի պետական մարմինների միջև էականորեն նվազեցնում է դրա ուզուրպացման և միանձնյա տնօրինման ռիսկերը, հնարավորություններ ստեղծում ամենաթողության ու անօրինականության բացառման համար: Միայն այս դեպքում է հնարավոր երաշխավորել «իշխանությունը պատկանում է ժողովրդին» սկզբունքի գործառնումը:
- Ատենախոսը գտնում է, որ իրական պառլամենտարիզմ կարող է գոյություն ունենալ միայն ժողովրդավարության պայմաններում, երբ խորհրդարանը՝ պառլամենտարիզմի կարևորագույն բաղադրատարրը, դառնում է այն վայրը, որտեղ տեղի է ունենում դեմոկրատիայի տեսության և պրակտիկայի միաձուլում: Ժողովրդավարությունը ժողովրդի կամքը արտահայտող վարչակարգ է, խորհրդարանը՝ ժողովրդի կամքն արտահայտող մարմին: Պառլամենտարիզմը ծագում և գոյություն է ունենում այն ժամանակ, երբ խորհրդարանն օժտվում է օրինաստեղծ լիազորություններով, կառավարության ձևավորման և վերջինիս նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մեխանիզմներով:
- Իրական ժողովրդավարական սկզբունքների վրա հենված խորհրդարանի ձևավորումն ու գործառնումը բարդ և ժամանակատար գործընթաց է: Ժողովրդավարական կարգի սպառնալիքի պարագայում հենց խորհրդարանն է հարվածի տակ ընկնում: Առանց իրական գործառնող խորհրդարանի անհնար է

կառուցել ժողովրդավարական իրավական պետություն, ստեղծել օրենսդրության և իրավունքի արդյունավետ համակարգ, հասնել քաղաքական կուսակցությունների զարգացմանը:

Ատենախոսության մեջ ձևավորված հետևությունները, ընդհանրացումները, եզրակացությունները, առաջարկությունները ունեն գիտագործնական նշանակություն, դրանք կարող են կիրառվել գիտաուսումնական և պրակտիկ քաղաքական գործունեության ոլորտներում, քաղաքական մասնակցության գնահատման ծրագրերի մշակման գործում:

Ատենախոսը պահանջվող մակարդակով կիրառում է պատմական, համեմատական, համակարգային, վերլուծական մեթոդները:

Հեղինակի հրատարակած գիտական 6 հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Այնուամենայնիվ ատենախոսությունը զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնցից հարկ ենք համարում նշել հետևյալները.

1. Ատենախոսության երրորդ գլխի առաջին՝ «Պառլամենտարիզմի զարգացման միտումները ՀՀ-ում» ենթագլխում հեղինակն անդրադարձել է խորհրդարանական գործունեության մասնագիտացման և այլ հիմնախնդիրների: Ցանկալի կլիներ, որ այս բաժնում անդրադարձ կատարվեր նաև միջխորհրդարանական համագործակցության մեխանիզմներին ու խորհրդարանական դիվանագիտությանն ընդհանրապես, որտեղ մենք կաղում ենք:
2. Քաղաքագիտությունը նոր, երիտասարդ գիտություն է Հայաստանում, դեռևս չունի կայուն գիտական ավանդույթներ և նշանակալի հետագիծ: Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր հետազոտող առավելագույնս հայացնի օտարածին քաղաքագիտական հասկացությունները, սահմանումներն ու գիտական ապարատում նշվող եզրույթները: Այս առումով հեղինակը թերացել է, որովհետև ատենախոսությունում տեղ են գտել օտար ծագմամբ բառեր ու հասկացություններ, ինչպես օրինակ «տրանսֆորմացիա», «ֆենոմեն», «դելիբերատիվ», «դուալիստական» և այլն, որոնք ապացուցում են, որ հեղինակն ուշադիր չի եղել այս հարցում:

3. Ուսումնասիրելով դելիբերատիվ ժողովրդավարության էությունը որպես խորհրդակցական հասարակական կարծիքի վրա հիմնված քաղաքական որոշումների ընդունում՝ հեղինակը հիմնվել է միայն Յու. Հաբերմասի մոտեցումների վրա: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակն օգտագործեր նաև Ջ. Ռոուզի, Բ. Բարբեռի հետազոտությունները:
4. Որպես ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող գործոն գիտա-քաղաքական, վերլուծական շրջանակներում բազմիցս նշվել է ընտրական օրենսգրքի անկատարությունը: Մեր կարծիքով անհրաժեշտ էր առանձին ուսումնասիրության առարկա դարձնել նաև գործող ընտրակարգը, որովհետև բոլոր հանգամանքներում ընտրությունները մնում են ժամանակակից պառլամենտարիզմի ամենակարևոր և հիմնական բաղադրիչներից մեկը:

Աշխատանքը գրված է պատշաճ գիտական լեզվով, առկա է նոր տեղեկատվական միջոցների կիրառությունը, օգտագործված գրականությունը բավարար է, գիտականությունը պահված է:

Վերը նշված մասնակի թերությունները չեն գցում ատենախոսության գիտական արժեքը: Հաշվի առնելով ատենախոսի արժեքավոր ձեռքբերումները՝ ես որպես պաշտոնական ընդդիմախոս գտնում եմ, որ Խոսրովադուխտ Գարեգինի Ազատյանի «Պառլամենտարիզմի առանձնահատկություններն ու միտումները փոխակերպվող հասարակություններում» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է քաղաքական գիտության թեկնածուի աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակը լիովին արժանի է ԻԳ.00.01 –«Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հասարակագիտական առարկաների ու հոգեբանության ամբիոնի դոցենտ, քաղաքական գիտությունների թեկնածու Մ. Դավթյան

Քաղաքական գիտությունների թեկնածու Մ. Դավթյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ, ոստիկանության գնդապետ՝ Գ. Մալխասյան

30.08.2022